# ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

# 1906

№ 2 (168) XVI ՏԱՐԻ ՓԵՏՐՈՒԱՐ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

## ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԵՐԱԶՆԵՐ

Հանգստացած շրջապատող աւերակների գերեզմանական լռութեան գրկում, հպարտ իր արիւնոտ ձեռքերի հրաշակերտած ստրկութեամբ, Մեծ Մարդասպանը, որ միաժամանակ մեծ Համիսլամականն է մահմեդական աշխարհում, նւիրւած է նոր և „սրամիտ" ծրագիրների իրականացման...

Բազմատեսակ և յանդուգն են Իլդըզ Քիօսքի գաղտնարաններում մշակւող համիդեան ծրագիրները.— Համիսլամական շղկապ բոլոր երկրների մուսուլմանների մէջ, մի թագաւորով, որ սուլթանը պիտի լինի, մի կենտրոնով, որ Ստամբուլն է. վերադարձ Հիւսիսային-Աֆրիկայի, Եգիպտոսի, Կովկասի, նոյնիսկ հնդկական մահմեդականութեան դէպի սուլթանականութեան գիրկը. միացումն Ստամբուլեան խալիֆայութեան գայխօնի տակ՝ բոլոր մահմեդական աղանդների՝ սիւննիների և շիաների՝ առանց որևէ քաղաքական խտրութեան. Շահի, գահակալ խաների և այլ սուլթանների խոնարհումն պօլսական վեհապետութեան առջև, և այլն և այլն:

Մի վեհապետ, մի խալիֆ, մի կենտրոն...

Եւ այդ ներոնամիտ ոճրագործը, որ իր խենթ յափշտակութեան մէջ չի նկատում կամ չը նկատել է ձևանում, թէ իր 30-ամեայ ամօթալի թագաւորութեան ժամանակ՝ Օսմանեան պետութեան մի երրորդ մասը՝ արդէն խլւած իր արիւնոտ ճանկերից՝ դարձել է անկախ և անջատւած երկիր, որ իր աւերիչ ըեժիմով սպառնում է նոր հատւածներ կազմել Բալկանի և Փոքր-Ասիայի սահմանների վրայ, հիւանդոտ յափշտակութեամբ երազում է տիրանալ այն գեղանի երկրին, որ Կ ո վ կ ա ս անունն է կրում, որը երբեմն սուլթանական թագի մարգարիտն էր, այժմ մարգարիտ՝ ցարական թագի, սգաւոր և անփայլ թէ մէկ, թէ միւս թագի վրայ...

Քաղաքական այդ ցնորքը, երկար տարիներ թաղնւած վեհապետական դիւանի մէջ, այսօր՝ ռուսական ընդհանուր դժբախտութեան սև օրերին, հանդէս է գալիս ոչ միայն իբրև տենչանք, այլ և իբրև „մշակւած ծրագիր", ձգտող դէպի իրականացումն, փափագող տեղաւորւելու մահմեդական „ազգասէրների" գլխի մէջ, իբրև քաղաքական պրոգրամ, նորագոյն մուսուլման սերունդների ոգևորութեան առատ աղբիւր...

„Երզրումի շրջանից զօրք մտցնել Անդրկովկաս, առաջ խաղալ դէպի Կարսի, Երևանի, Գանձակի և Բագուի նահանգները, ոտի կանգնեցնել տեղական մուսուլման ազգաբնակութիւնը և միացնել այդ երկիրը Օսմանեան պետութեան"— ահա սուլթանական նորագոյն երազ — ծրագիրը, որի մասին թէև ոչ մանրամասն, բայց որոշ տեղեկութիւն ունեն թէ՛ Կովկասեան շտաբի մէջ, թէ Պետերբուրգ, թէ՛ Լոնդոնի արտաքին գործերի մինիստրութեան մէջ, թէ Բերլին, ինչպէս վկայում են անպաշտօն ակնարկները, և որի շուրջը վաղուց փըսփըսուկներ են լսւում Կովկասեան թիւրք պօլիտիկոսների շրջանում, ներշնչւած Կ. Պօլսից, անթիւ և անպատ էմիսարների միջոցով...

Այդ յանդուգն ծրագիրը թևեր առաւ այն յիշատակելի օրերին, երբ Ցարի հաւատարիմ զօրաբանակը ինչպէս գառնանամուտի ձիւն հալւում էր եապօնական գրոհի առջև, անսովոր ճակատամարտների այն ծանր շրջանում, երբ ապշած ու զարմացած մարդկութեան աչքերի առջև իր այլանդակ մերկութեամբ հանդէս եկաւ ռուսական զինւորականութեան անկազմ, անկերպարան վիճակը, նրա դասական անկարողութիւնը՝ դիմանալու կազմակերպւած թշնամու գիտակցական հարւածներին: Անյաղթելի զինւորականութիւնը այլևս չը կար: Իսկ Ցարիզմը առանց զօրքի՝ մի շւաք է, քաղաքական սնգոյր, որ չի դիմանում ոչ արևին, ոչ անձրևին... Արտաքին փ շ ր ո ց ի ն յաջորդեց ներքին ցնցումը— յեղափոխական մարտը իր ամբողջ ոյժով ու յափշտակութեամբ, և մեծանուն ու անյաղթելի միապետութիւնը, որից դողում էր մահմեդական հարևանութիւնը՝ հարաւի սահմաններում, ակնյայտ դարձաւ իր ամբողջ նեխւածքով, կազմւածքի այլանդակ վէրքերով, թարախակալ, վարակիչ և մահաբեր...

Ցարիզմի բթամիտ քաղաքականութիւնը՝ կովկասեան թուրքերի շարժումով հակա—յեղափոխական մի զսպանակ պատրաստել հայկական վերանորոգիչ պահանջների դէմ, որի արդիւնքն եղաւ Արեան տարին Կազբէկի և Արարատի ստորոտներում—աւելի ևս սիրտ ու ոյժ տւեց սուլթանական ծրագրին: Արիւնը քաղաքական ծրագրների աւազան դարձաւ: Թուրքերի հակահայկական ըմբոստութիւնը ցարի համար հակայեղափոխական շարժումն էր, իսկ սուլթանի համար՝ համիսլամական տիրապետութեան նախադուռն: Եւ այսօր նոյն այն

մուլթ Թուրք „պօլիտիկոսները“, որոնք անասնացած բիւրօկրատիային հաւատացնում են, որ „հայկական կոտորած“-անելով, նրանք մի նպատակ միայն ունեն՝ ծառայել ցարի գահին, այլ շրջաններում և այլ անձանց հաւատացնում են, որ հակահայկականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յարդարումն այն ճանապարհի, որով պիտի անցնի սուլթանական զօրքը, Կովկասը՝ Մեծ-Խալիֆին վերադարձնելու համար:

Ե՞րբ կը գայ այդ վճռական ժամը, երբ կը հնչէ խորհրդաւոր զանգը:—Այդ սուլթանն էլ չը գիտէ: Երբեմն „վճռական ժամը“ յետաձգւեց Պորտսմուտի անսպասելի հաշտութեամբ: Քիչ յետոյ, երբ համառուսական ներքին փոթորիկը բռնկեց և հարաւում տեղի ունեցաւ Բագւի և Նախիջևանի „կոտորածը“—Իլդըզ-Քէօշքի մեծաւորը դարձեալ շփեց իր ոսկրացած թաթերը: Սակայն այս անգամ էլ բերկրանքը երկար չը տևեց—Անդրկովկասի ամբողջ տարածութեան վրայ „կոտորածը“ կերպարանափոխւեց „ընդհարման“ և թաթար խուժանի հանդէպ հպարտօրէն բարձրացաւ յեղափոխական մարտիկ բանակը, որ այլ ևս չի փախչում, այլ փախցնում է, որ չի ընկճւում, այլ ընկճում է...

Այդ հպարտ, անձնւէր, ազատութեան հեռանկարով յափշտակւած յեղափոխական բանակը—Թող լաւ յիշեն բռնաւորները — ընկճւելու տրամադրութիւն չ՚ունի երբէք և ոչ մի պարագայի դիմաց: Եւ „վճռական ժամին“—ենթադրենք մի վայրկեան—երբ սուլթանական զօրքերը կը մօտենան Կովկասի սահմաններին և Թիւրք ազգաբնակութեան ականջին կը հնչէ ա պ ս տ ա մ բ ո ւ թ ե ա ն կոչը, այդ դժբախտ օրերին և այդ դժբախտ փաստի դիւթական ազդեցութեան տակ՝ այսօրւան ցիրուցան, նոյնիսկ հակադիր ոյժերը, հայ, վրացի, ռուս, որոնց մինչև այժմ անկարելի եղաւ շաղկապել տ ե ղ ա կ ա ն մուսուլմանական շահատակութիւնների դէմ, ձեռք ձեռքի տւած, միակամ և միաձոյլ՝ գրոհ կը տան դէպի վատթարագոյն թշնամին, որ երազում է այդ գեղանի երկիրը վերադարձնել մօնգօլական տիրապետութեան և հարեմապաշտ գաղափարների առջև խոնարհեցնել ներկայի հսկայական շարժումը, տանջւող ժողովուրդների խընկելի ազատամարտը:

Մեր կռիւը ազատագրական ն ե ր ք ի ն կռիւ է, որ ձգտումն ունի վերանորոգել համայն Ռուսաստանի հետ և Կովկասի քաղաքական ու տնտեսական կազմը: Անջատման ծրագիր չ՚ունեն ոչ Հայկական նահանգները, և ոչ էլ Վրաստանը: Եւ եթէ ն ե ր ք ի ն կռիւը մինչև այժմ միացրեց մ ի մ ի ա յ ն յեղափոխական տարրերը, ա ր տ ա ք ի ն դժբախտութիւնը և քաղաքական մեծագոյն ա ղ է տ ը, որպիսին սուլթանական տիրապետութեան հեռանկարն է, կը շաղկապէ ց՚այժմ անտարբեր, հակադիր, նոյնիսկ ոսոխ տարրերը, մղելով բոլորին դէպի ընդհանուր վտանգի դաշտը, դէպի բոլոր ժողովուրդների ազատութեան դարաւոր թշնամին: Մեծ դժբախտութիւնը շաղկապման մեծագոյն ոյժն է:

Ազատութեան նահատակների արիւնով ցօղւած Կովկասեան հողը՝ ըմբոստ է այժմ: Ցարիզմի դէմ մարտնչող ժողովուրդները՝ սուլթանականութիւնը տանել չեն կարող, չեն կամենայ, լսել անգամ չեն ուզի: Նիկոլա՚ չ՚ուզողը, Համիդ չի ուզենայ: Եւ այն ձեռքերը, որոնք բարձրացան Պլեվէի, Գօլիցինի, Անդրէևի և Նակաշիձէի վրայ՝ նրանք տասնապատիկ ոյժով ու սոսկումով գնդակ ու կրակ պիտի թափեն այն սև ոյժերի գլխին, որոնք պիտի տանեն ու տարածեն Շաքիրի, Նազըմի և Ջէքիի ուրուականները, նշանակը Օսմանեան անարգ բռնապետութեան...

Անդառնալիօրէն անցան այն „միամիտ“ ժամանակները, երբ հպատակ ժողովուրդները խաչով, խաչվառով էին ընդունում բռնապետների բանակները: Ժամանակը անողոք դատագիրքն եղաւ: Ոչ միայն սուլթանների կիսալուսինը, որ այսքա՛ն դարերից ի վեր սուգ ու շիվան է տարածում իր ամբողջ երկրի վրայ, այլ նոյնիսկ քրիստոնեայ ցարերի եռագոյն դրօշակը, որ սրանից հարիւր տարի առաջ խանդաղատանքով գրկւեց Կուրի և Երասխի ափերին, ըմբոստ դիմադրութեան փոթորիկ կը յարուցանի, երբ փորձի ծածանել ժողովուրդների գլխին՝ պ է ն ք ի ու զ օ ր ք ի ո յ ժ ո վ: Տիրապետութեան համար այժմ այլ պայման է պահանջւում նոյնիսկ փոքր-Ասիական սահմանների վրայ—ժողովուրդների տրամադրութիւնը, նրանց բարեհաճ վերաբերմունքը դէպի եկւոր իշխանաւորը, դէպի տիրապետութեան ներկայացուցիչը:

Ո՞ւր է այդ բարեհաճ տրամադրութիւնը: Նա թաղւած է արեան մէջ, դիակների կոյտերի տակ և կնքւած համաժողովրդական սուգի անմոռաց մեղեդիներով: Ժողովրդական երևակայութեան առջև, հսկայական ժայռի նման, կանգնած է արեան Տասնամեակը, իբրև ատելութեան ու ոխի, թշնամանքի ու մարտի յաւիտենական յուշարձան: Նա շատ ե ր ա զ ն ե ր ի դերև կը հանէ:

Խիզախ, բայց անմիտ երազներ, որոնք պէտք է թառամեն նոյն քարացած ուղեղի և նոյն շրջանի մէջ, ուր նրանք ծնունդ առան: Սուլթանական որևէ ծրագրի համար, միշտ մահաբեր, միշտ ստրկացնող, միշտ հակաքաղաքակրթական, չը կայ այլ ևս նպաստաւոր հող ոչ մի տեղ, նոյնիսկ ցարերի լուծին ենթակայ երկրի մէջ: Համայն ըմբոստացումը կը լինի համիդեան ձգտումների միակ պատասխանը, նրա քաղաքական երազների միակ „մեկնաբանութիւնը“... Ժողովուրդները, նոյնիսկ կիսաստրուկ, դէպի ազատութեան կենսատու աղբիւրն են ձգւում, և երբէ՛ք դէպի այն մահաբեր անապատը, ուր թագաւորում է մօնգօլեան մտքի ստեղծած վատթարագոյն ռեժիմը—սուլթանականութիւնը...

# Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն Ե Ր Ը

Թ

# ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

---

Եւ Սամուէլ մը ընդերկար մենախօսեց գիշերուան ժամերուն մէջ կանգուն՝
Ձայնը դողդոջ էր, սիրտը սիրով լեցուն, աչուըները մոխրապատ և ինք իր գաղափարէն գեղեցիկ՝
Նայուածքներէն և արցունք կը հոսէր և կայծեր կ'արձակուէին և հոգին շքեղօրէն Ցեղին հոգին էր,
Եւ այսօր կուգէր իր տառապանքին և զոհը ըլլալ և իր իդէալին հերոսը միաժամայն...

„Հայրենիքիս վրէժին խօսքերը և տառապանքիս տարիները ուղեղիս մէջ՝
Քալե՜ցի և քալե՜ցի, յոգնած, ըմբոստ, ճշմարտախնդիր և մինակ,
Արիւնի քաղաքներէն ուրիշ քաղաքներ և գիւղերէ ի գիւղ...:
Ձայն չի կար: Մեռելութիւն ամէնուրեք և աւերակներ լեռնակուտակ,
Ամէն երդիք իր սիւնին վրայ կործանուած՝ և ամէն աղբիւր իր երջանիկ երգին...
Արտավայրեր արիւնով ոռոգուած՝ և հնձաններ գերեզմանոցներու նման,
Ճամբաներուն վրայ ոսկրերու լաց ու կոծ՝ և այրիներ՝ և գառնադէմ յուսահատներ,
Անագորոյն օրէնքին դէմ ըմբոստներ՝ և ջախջախուած նորածիններ գետեզերքի քարերուն դէմ...
Արդարութիւն պաղատողներ՝ և ուրիշներ որ տակաւին խաչափայտերու կը փաթթուին...
Գիւղնե՛ր և գիւղնե՛ր որոնց գլուխները միայն մոխիրներէն դուրս է ցցուած՝
Հունձքերուն վրայ դիա՜կներ, աւազաններուն երեսը և դիա՜կներ իմ սարսափահար աչքերուս տակ...
Շղթայակապներ բանտին դռներուն քով և մեռելներ յամառող պատերուն դէմ կանգուն...
Կիսամեռներու ձեռքեր՝ դեռ կեանքին արեգակը դառնութեամբ աղե՜րսող,
Ուրիշներ որ կուզէին դեռ ապրի՜լ մահուան ճանապարհէն ալ անդին...
Եւ ուրիշներ սիրուած հողին համար անգամ մը ալ իրենց արցունքը վար կուլային..."

„Ո՜վ անեզրութի՜ւն դիակներու ի՜նչ չափով քեզ կրնայի չափել,
Արիւն է որ կը բուրէ և ես թափառականս, արիւն է որ կը շնչեմ...
Եւ աչքերս տխրաքայլ, ո՞ր ժամանակէն ի վեր, կարմիր հողին կը կպչին...
Մարդ չէ ծնած այստեղ կարծես և ոչ ալ մարդ է մեռած՝
Այլ չարաշուք բնութիւնն է որ իր կողէն դիակներ է դուրս նետեր...
Եւ երկինքը իր աստղերէն վար իր արիւնն է որ մեր բոլորին վրայ կը տարափէ...
Տար տարուան ճանապարհո՞րդ, ո՞ւր եմ այսօր, ո՞ւր է ճամբաս,
Ո՞ւր է տունս, ո՞ւր վերադիրս, ո՞ւր է լապտերն իմ սարսափի...
Նպատակիս պարտուեցա՞ւ թէ արժանի չեմ անոր խօսքին...
Ի՞նչ կնճիռ է այս կնճիռը որ ճակատիս վրան ակօսուեցաւ,
Խղճի խայ՞թն է որ փորեց զայն թէ ժամանակն բռնակալ...
Ո՞ւր են այն փարոսները որոնց լոյսերէն գինովնալով հասայ եկայ,
Ե՞րբ մարեցան: Ո՛չ, դեռ կը վառին, յառաջացի՛ր, դեռ կը վառին,
Ըսին ինծի: Ջուրի ձայն մը, կը ճանչնամ քեզ սարսափահար Եփրատն ես դուն,
Ահաւասի՛կ Վանայ ծովը:—Յառաջացի՛ր, ըսին ինծի, Արարատէն ալ անդին..."

„Ամայութի՜ւն, ամայութի՜ւն, վերջապէս քու փոթորկիդ թափն իմացայ...
Ահաւասի՛կ կեանքի ձայներ, պայքարի փայլ և դիակներ օդերուն մէջ...
Ահաւասիկ կռուին շեփորը, ո՜վ Մասիս որ ալ ծաղէդ կ'արձագանգուիս...
Եղբա՛յք ուրեմն պատանքներդ անցեալներու սուգերուն մէջ բաժնելէն,
Եւ թո՛ղ գլխեդ անցնող ամպերն՝ աչքերուդ արիւնը ցամքեցնե՜ն...
Նոյն Ցեղն է՝ որ աչքի եկաւ, նոյն ցեղն է՝ որ կը զարնէ՛, նոյն ցեղն է որ այսօր կ'ապրի,
Եւ ի՜նչ նախճիր, ի՜նչ սրածում, ի՜նչ յաղթական ճակատամարտ...
Ի՜նչ պաղատանք, ի՜նչ բռնութիւն թշնամիին անասնական խաժամուժէն...
Եւ եղբայրներս են որ կը ձայնեն: „Գթութիւնը մենք չե՛նք ճանչնար, միայն վրէժն է՝ ճշմարիտ":
Ցեղի՛ փառքը, ձե՛զ ապագան, ձե՛զ պատմութիւնը ովկեան,
Տար տարուան արիւն ունի՛նք մեր Ցեղին քով ծովացած,
Եւ այսօր է՝ որ ողբեցինք մեր ճակատին մութն ստրկութեան,
Արշալոյսներ պիտի ծնին, ծաղկապատ՜ններ, ձեր ճակատները պսակող...
Եւ Հայրենիքն ահաւասի՛կ ձեզի ղրկեց իր չորս ծայրէն իր զաւկները գինովնալու,
Հարուածեցէ՛ք, հարուածեցէ՛ք, մինչև որ Արդարութիւնը ձեզ բոլորդ համբուրէ..."

„Ո՞վ էք դուք որ այս գիշեր կ'ունկնդրէք մենախօսիս վշտերուն,
Մտածումիս մէջ իմ ամօթէս ես սկսայ կատաղութեամբ արտասուել...
Ո՞ւր կ'երթաք, ո՞վ էք դուք, եղբա՞յր, ընկե՞ր, թէ զինակի՞ց,
Օ՜, ես ալ ճանչցայ Տառապանքը, ո՞ւր կ'երթաք, զիս ալ առէ՛ք, զիս ալ տարէ՛ք ձեզի հետ..."

ՍԻԱՄԱՆԹՕ

---

կայիս մէջ, երբ դեռ աշնան կէսն էինք, ցորենի չափը կ՛արժէ 55—60 դահեկան, իսկ տարեկանինը՝ 36—40։ Հիմակուընէ ժողովրդի մէջ սովի նշաններ ակներև են։ Ցանուած սերմը ալ 2 ամսէ ի վեր հողի մէջ ձգուած և առանց անձրևի, բարեբախտաբար ուշացած անձրևը սկսաւ տեղալ. մինչ այդ բնութիւնը ցրտած էր և նոյն իսկ դաշտերը ձիւն իջած, իսկ սարերը և լեռնաշղթաները արդէն սպիտակ սաւանով ծածկուած են բաւական ժամանակէ ի վեր։

Արտասովոր եռանդով կը գանձուին կառավարական տուրքերը. ո՛չ մի խստութեան և անգութ վայրագութեան առաջ կանգ չեն առներ։ Շաբաթ չանցներ որ թահսիլտարները գիւղը ազատ թողնեն. մէկը չգացած միւսը վրայ կը հասնի. ամէն մէկը մի անուն, մի պաշտօն ունի, սակայն նպատակը մէկ.—տեսակ տեսակ հարկերու գանձում։ Իսկ օրէնքի կատարեալ բացակայութիւն։ Մարդ չի հասկնար և հնարաւորութիւն ալ չունի կառավարութեան հարկահաւաքութեան մասին որոշ գաղափար կազմել։ Մի անգամ կուգան և ներկայ տարուան նուֆուսը կը պահանջեն, ուրիշ ո՛չ մի խօսք։ Հարևան գիւղի մէջ այլ պահանջ է— Նախորդ տարիների պ ա գ ի յ է ն ե ր ի լրացման խնդիրն է մէջ բերուած։ Թահսիլտարներ կուգան՝ ամէն մէկը իր ուրոյն պահանջներով և բռնի գանձելու համար իրեն յատուկ տանջանքի ձևերով։ Մի բան պարզ կ՛երևի որ գանձումները և գանձման համար ի գործ դրուած միջոցները կախուած են պաշտօնեաներու անձնական քմահաճոյքէն և նայելով թէ գիւղացին, որուն տան մէջ հիւրընկալուած են՝ ինչ ընդունելութիւն ցոյց կուտայ իր ինքնակոչ հիւրին։ Ով ճարպիկ է, նա կրնայ սիրաշահել՝ զանազան խոստումներով և նուէրներով։ Բայց ժողովրդի մօտ ուժ չէ մնացեր և ո՛չ ալ սիրտ սիրաշահելու։ Նա ինքզինք յանձնած է բաղդի քմահաճոյքին և ամէն մէկ երևոյթը կը բացատրէ ճակատագրով։ Իրարմէ շատ քիչ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղեր տարբեր բաղդի կ՛արժանանան։ Մի տեղ կը բաւականանան ներկայ տարուան տուրքով, իսկ միւս տեղ կը հեծեն պագիյէներու ծանրութեան տակ. և կը գանձեն ամենայն անխղճութեամբ, առանց շունչ քաշել տալու, ինչ գնով ալ լինի, որպէսզի նոր պագիյէ չմնայ։ Դէպքի ատեն ամէն բան տարուած է, բայց դէպքէն վերջը բոլորին յաջողած է իրենց հիմնայատակ եղած տուն ու տեղը, տնտեսութիւնը վերականգնել— եթէ ոչ առաջուան աստիճանին, գէթ իրենց գոյութիւնը քարշ տալու չափ։ Գիւղեր կան որ իրենց հողերէն են զրկուած. մասամբ գրաւուած են բռնութեամբ, մասամբ ալ փախստականներու ձեռքով։ Օրինակ,—Ներքին Հայկայ Ձորի Անգղ գիւղը այս պահուս ամենանեղ դրութեան մէջ է. գիւղը ունի 90—100 տուն-ծուխ։ Գիւղի մէկ մեծ թաղը դէպքէ ի վեր ամայի է և անմարդաբնակ և միւս մասի տներէն ալ 15—20-ը աչքի կը զարնէ արական սեռի բացակայութեամբը։ Որբևայրի կիներ կամ պառաւ տատեր՝ նստած իրենց քարուքանդ օճախի վրայ՝ իրենց ճակատագրի հարուածները կը կրեն անտրտունջ. անցած դարձածը Աստուծոյ—„Ամենազօրմած Աստուծոյ" տնօրինութեան կը վերագրեն։ Այս գիւղի պագիյէն տարիներու ընթացքին մէջ հասած է 45—50,000 դահեկանի։ գիւղի անջրդի և պտղաբեր „սարի հողերը" անցեր են Արտամէտցւոց „Թիւքերի" ձեռքը՝ ամէն մէկ արտ 10—20 կամ աւելի ղուրուշ Սալէֆի փոխարէն։ Իսկ մնացած ջրարբի տեղերը թէ՛ շատ քիչ են և թէ մանաւանդ շատ անբերրի։ Ակիզբները այդ գիւղի միակ ապրուստը եղեր է պանդխտութեան գացած մարդկանց աշխատանքը։ Միայն այս գիւղէն Պօլիս և այլ տեղեր պանդխտած են եղեր 87 հոգի՝ 97 թւականին, որոնք և առհագին բնակութեամբ դրամ կ՛ուղարկէին, դրամ որով կը հոգացուէր թէ կառավարութեան տուրքերը և թէ ընտանիքներու ապրուստը։ Իսկ այժմ դրսի եկամուտէն կտրուած, հողերու լաւագոյն մասէն զրկուած, ուրիշ աշխատանքէ զուրկ— բնականաբար պէտք է հեծեն պարտքերու և պագիյէներու տակ։ Ես նկարագրեցի մի գիւղի վիճակը. հապա միւսնե՞րը։ Այս տարի ամբողջ Հայկայ Ձորի գիւղերը, բաց առեալ մէկ-երկուսէն, ցանքի արտասովոր պակասութիւն ունեցան։ Արդէն անցեալ տարիէն ցանքի պակասութիւն կար։ Գարնան այս գաւառի բողոքականներու շրջանակը սերմի դրամ էր բաշխեր, որ սերմ գնեն և „կիսարար" ցանեն և արդիւնքը կիսեն շրջանակին հետ։ Այժմ բողոքականները տեսնելով հունձքի հետևանքը՝ յօժարակամ հրաժարեր են „կիսարարութենէն" և իրենց տուած սերմի դրամը կը պահանջեն. բայց տուող չիկայ. ի՞նչպէս և ո՞րկից տալ։ Շատ շատերը այդ դրամով գարնան ոչ թէ սերմ են ցաներ, այլ իրենց սովամահ գոյութիւնը քարշ են տուեր մինչև հունձք։ Ատիկա պատճառ համարելու է, որ շատ շատերը այդ դրամը իբրև „պախշիշ" են ընդուներ և երբեք ալ չեն հաշուեր և չը պիտի հաշուեին այն մտքի հետ թէ վերադարձնելու են։ Թերևս այս է պատճառը, որ բողոքականներու շրջանակն ալ դիմեր է տաճիկ կառավարութեան յատուկ գանձման սիստէմին—զապթիյէներու բռնութեան միջոցին։ Մի քանի տեղեր արդէն բռնութեան դէպքեր տեղի ունեցան ինչպէս Պլթից գիւղը և այլն։

Մեղքը որո՞ւն է... Տարիներ առաջ այդ միսիոնարութիւններու մէջ մրցում կար. կաթօլիկ միսիոնարները դրամի ուժով ուզեցին լաւ դիրք ստեղծել և ժողովրդին մէջ համբաւ ձեռք բերել. այդ նպատակով ալ աջ ու ձախ դրամ ցանեցին, սկսեց ըստ երևոյթին համայնքի մեծանալը, աւերեալ „եղբայրանալու" գաղտնիքը պարզուեցաւ, երբ դադրեցաւ դրամի բաշխումը։ Ճիշտ նոյն ժամանակէն ժողովրդի մէջ առածի ուժ ստացաւ սովորական դարձուածքը" „փարա վար, կաթօլիկ վար, փարա եօգ, կաթօլիկ եօգ"։ Այո, չքաւորութիւնը, տնտեսական քայքայումը ի՛նչ միջոցների առեւ, որ մարդուն դիմել չի տար։

Այս տարուան պակասը կարծես լրացնելու համար է նոր տուրքի յաւելումը։ Նուֆուսի վրայ աւելցուցին 35 0/0։ Ով որ առաջ 100 դահեկան նուֆուս կուտար, այժմ պէտք է տայ, և արդէն տուաւ ալ, 35 դահեկան։

Ուրիշ նորութիւն մ՛ալ։ Քանի մը գիւղեր—համեմատած իրենց դրացի գիւղերուն—աւելի ջանք են թափեր տարուէ տարի տալու և լրացնելու իրենց տարեկան տուրքերը՝ առանց պագիյէ թողնելու և երբ ներկայիս մէջ ալ գոցեր են ներկայ տարուան տուրքերու հաշիւը՝ անոնց վրայ նոր պահանջներ են դրած, այն է՝ քանի որ բոլոր տուրքը տրուած է, պէտք է գալ տարուան տուրքի հաշւոյն բան մը տալ. ի՞նչպէս կարելի է որ գիւղը ազատ ըլլայ պարտքէն և չենթարկուի զապթիյէի

և Թահսիլտարի վայրագութիւններու — ահա այս իսկ պատճառով „Ալէլհէսապ“ (ուհաշիւ) պատրւակ է, որ ոստիկանները գան նստեն, ուտեն, խմեն իրենց ցանկացածի պէս և ապա „փէշքէշ“ մը ստանալով հեռանան:

Մօտ երկու ամիս առաջ երեկոյեան մթնակոխին 10—15 հոգի զինուած կը յարձակւեն և կուզեն քշել գիւղի ոչխարները, որ գիւղի մօտ Շամիրամ գետի միւս կողմը կը մակաղէր. 5 ձիաւոր հեռուն կանգնած կը սպասեն, որ միւսները հետեւակ հովիւը շրջապատեն, լայն կապեն և հօտը քշեն: Հովիւը, կորիճ երիտասարդ մը, իսկոյն հաւար կը կանչէ և ինքն ալ ձեռք չանցնիր՝ հօտի մէջ այս և այն կողմ վազվզելով: Բարեբախտաբար գիւղի մէջ կը գտնուի հայ ոստիկան մը, որ առնելով կառավարական մարթինի հրացանը կը հանի. հաւարի օգնութեան կ'երթայ նոյնպէս քիւրդ հերթապահը և երկուստեք կը սկսի հրացանաձգութիւնը: Ամբողջ գիւղը՝ մարդ, կին, երեխայ վրայ կը հանին. աղմուկ, աղաղակ երկինք կը հանի: Աւազակներու խումբը խոհեմութիւն կը համարի ձեռնթափ լինել աւարէն և ետ քաշուել:

10—15 օր վերջ գիշերամուտին Պլթինց գիւղի հայու մը գոմէն 7 տաւար կը քշեն, կը տանեն. բայց լուսաբացը մօտ լինելով չեն կրնար պարտկել, հազիւ հազ կը հասցնեն Կզզլի գիւղի „Արխուվանք“ կոչուած աւերակը՝ որ կը գտնուի հիմա սարի արեւելեան լանջը Քէրբլահասան քիւրդ գիւղի վերեւը: Ցերեկով կը յաջողուի տաւարի ոտքի հետքը բռնելով՝ երթալ գտնել և վերադարձնել:

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

## ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

### IV

Ճանաչենք, լաւ ուսումնասիրենք մեր միջավայրը: Դա և դրացիութեան տարրական պարտք է և պահանջ առօրեայ գործունէութեան: Դա կեանքի ու բարօրութեան պահանջ է այն բոլոր ժողովուրդների համար, որոնք շփւում են մուսուլմանների հետ, բայց դա մի „կատեգորիկ հրամայական“ է մանաւանդ հայ ժողովրդի համար: Լոկ մանկամիտ բացականչութիւններով, Թուրք պրօլետարիատին կոչեր ուղղելով, նրա ուժի և իդէալիզմի վրայ յոյսեր սնուցելով՝ լուծում չենք տայ արիւնոտ խնդրին:

Ո՞ւր է այն քաղաքական ալքիմիան, որի շնորհիւ կարելի լինէր արճիճի բնազդները միանգամից վերածել ոսկէ բարքերի...

Ո՞ւր էր, թէ հրապարակի վրայ լինէին միայն զուտ տնտեսական, դասակարգային կատեգորիաներ, առանց ռասսային-հոգեբանական բազմախճճիր պրօբլեմների:

Ո՞ւր էր, թէ իսկապէս „երկու բուրժուա դասակարգերի մրցումը“ լինէր ներկայ արհաւիրալի ճգնաժամի սկզբնաղբիւրը... Բայց մենք տեսանք, որ դա մի աղաղակող անմտութիւն է միայն, մի խակ ու սիմպլիստ յայտարարութիւն, ծնունդ ամեն բան խեղաթիւրող մետաֆիզիկական ռէզոնէօրութեան: Եթէ ցեղական փակտորը այսօր մի խոշոր մեծութիւն է, քաղաքակրթուած Եւրոպայում, մի ուժ, որ սօցիալիստ կուսակցութիւններն անգամ ստիպուած են հաշուի առնել իրենց պրօպագանդի, ծրագրի ու տակտիկի մէջ, —ապա այդ փակտորի ազդեցութիւնը ուղղակի եղերական է մեր միջավայրում...

Օպտիմիզմը հասարակական կեանքում լաւ բան է, իհարկէ, բայց յոռետեսութիւնը որոշ պարագաներում աւելի լաւ է: Պէտք է իմանալ խոր թափանցել մարդկային բնութեան մանաւանդ յոռի և չարանիւթ մղումների մէջ,—ասել է մի ֆրանսիացի հրապարակախօս, և լաւ է ասել: Պէտք է սրատես հայեացքով զինուել՝ նշմարելու համար մեր նմանների, հարեւանների մէջ [illegible] տարրը, անասունը: Այդպէս է պահանջում ամենատարրական քաղաքագիտութիւնը:

Վարդագոյն հայեացքները, ջինջ հաւատն ու վստահութիւնը դէպի դրացու, թէկուզ և [illegible], զգացումները ինքն ըստ ինքեան հասկանալի ու գովաւելի են, բայց մենք կուզէինք և հազար անգամ երանի էր տայինք, որ դրանից մի տարի առաջ, մեծ կատաստրօֆի նախօրեակին, հայ ժողովուրդը նուազ հաւատ տածէր դէպի Թուրք դրացու բարեացակամութիւնը և աւելի հակամէտ լինէր տեսնելու նրա մէջ չար, վտանգաւոր տրամադրութիւններ: Անակնկալը այնքան զարհուրելի և այնքան կործանաբեր չէր լինի մեզ համար: Մենք հազար անգամ երանի կը տայինք, որ այդ նոյն սկեպտիցիզմը, նոյն թերահաւատութիւնը դէպի դրացի Թուրքը արտայայտուէր գոնէ աղէտի բռնկումից յետոյ—ուշ, քան երբէք—Շուշու, Գանձակի և ուրիշ բազմաթիւ դէպքերից առաջ, ուր հայ ազգաբնակութիւնը այնքան չարաչար ու անմիտ կերպով զոհ գնաց իր յանցաւոր, անըմբռնելի, գրեթէ չնաշխարհիկ դիւրահաւատութեան... Մի տեղ արիւնարբու Ցակայշվիլին են ներբողներ կարդում բազմաթոռագիր յիշատակագիրների մէջ, մի այլ տեղ, Գանձակում, չը նայած ողբերգական պրեցեդենտներին, երկար ժամանակ մեր որաճող հասարակութիւնը չէ կարողանում վճռել՝ ժամ առաջ քաշուելու մտքով ու գոյքով Թուրքական թաղից և հաւատում է մօլլաներին, որոնք առերեւոյթ սէր են քարոզում, օրօրում, քնացնում, իսկ տակից պատրաստում են չեչուալի հարուածը.. Աղէտաւոր փաստեր, չափազանց, իրաւ է, ծանօթ, ընտանի մեզ յեղափոխականներիս, որ առիթ ենք ունեցել շատ անգամ արձանագրելու նոյն երեւոյթը տաճկահայկական շարժման ընթացքում... Եթէ կայ մի գիծ հայ ժողովրդի հոգեբանութեան մէջ, նզովքի արժանի մի գիծ, որ ներկայ սև օրերում լցնում է մեր սիրտը անսահման դառնութեամբ, զայրոյթով ու նողկանքով,—հէնց այդ առասպելական դիւրահաւատութիւնն է, այդ անխոհ ու լուսանես անտարբերութիւնը կազմակերպութեան հրահանգների և պաշտա[illegible] յորդորների հանդէպ, տակտի, շրջահայեցութեան այդ կատարեալ բացակայութիւնը, որից և հետեւում է մեր ժողովրդի սիստեմատիկօրէն անպատրաստ վիճակը, նրա [illegible]՝ վտանգների ժամին: Որքա՞ն դժուար է հաշտեցնել այդ բոլորը՝ հայի ինտելիգենտ խորամանկութեան մասին յօրինուած, տարածուած անէկդոտների հետ...

Հեռու մնանք, ուրեմն, միամիտ ու դաւաճան օպտիմիզմից և ճգնաժամի սիմպլիստ լուծման զառանցանքներից. գէթ այժմ սկսենք զգաստ աչքով նայել մեր իրականութեան վրայ, յարմարեցնենք նրա պահանջներին մեր բոլոր ուժերը, մեր ընդհանուր, հասարակական ճիգը, մեր տակտիկան: Երբէք չը մոռանանք, թէ ինչ „կուլտուրական“ ու էթնոգրաֆիական համայնքի հետ գործ ունինք, և եթէ օտարները, կամովին կամ տգիտութեամբ, յաճախ անտե-

որ դժբախտ իր արիւնարբու բնաւորութեամբ, իր անգիտութեամբ ու գազանութեամբ:

Ի՞նչ է անում կառավարութիւնը: Նրա տակտիկան հայերի վերաբերմամբ մազի չափ անգամ չի փոխուել: Մի քանի թեթեւ փորձեր եղան Գաշկովի կողմից զէնքեր բաժանել հայ գիւղացիներին (հինգ տանը մի հատ): Բայց այդ վճիռը նա չը կարողացաւ իրագործել, որովհետեւ Թիֆլիսի ամբողջ ապայակոյտը որոշեց բոլոր ուժով դիմադրել եւ զէնք չը տալ եւ չը տուեց: Գաշկովը յայտարարեց իրեն հիւանդ, եւ պաշտօնը վարում է Մալաման: Կասկածի տեղիք չը կայ, որ այստեղի բարձր վարչութիւնը միանգամայն շարունակում է քաջալեր հանդիսանալ թուրքերի բարբարոսութիւններին: Մեր բուրժուա ինտելիգենտները վերջապէս համոզուել են, որ ե՛ւ Շիրինկին (մանաւանդ սա) ե՛ւ Մալաման, եւ Կրիմ-Գիրէյ (սա առանձնապէս) շարունակ դաւադրութիւն են կազմում հայ ժողովրդի դէմ, իսկ Գաշկովը մի թոյլ, անկամք, անխելք, բայց դարձեալ դէպի հայերը առանձնապէս լաւ չը տրամադրուած մարդ է, խաղալիք միւսների ձեռքին...

Դարալագեազում թուրքական Հօրս գիւղը խաղաղ ապրող հայերի պատգամաւորութիւնը երէկ այստեղ էր: Եկել է զէնք խնդրելու, իրենց գաւառը մաքրելու համար: Խեղճերը պատրաստ են տալ ինչ ունին, միայն թէ հրացան լինի, պարզ գիւղացիներ են, բայց ինքնապաշտպանութեան ամենաբարձր գիտակցութեան հասած: Նրանք պատմեցին, թէ Հօրսի թուրքերին վարձատրելու համար Երեւանի փոխնահանգապետ Կօվալեօվ եւ գեն.-նահանգապետ Եայկէվիչ անտեսապէս իսպառ քայքայեցին 12 հայ գիւղ: Ամեն տընից վերցրել են տասնական րուբլի եւ տուել թուրքերին: Այս օրինակը բերեցի, որ լաւ հասկանալի դառնայ, թէ կառավարութիւնը որքան քնքոյշ է դէպի թուրքերը: Ո՞ր հայի կորուստ վերադարձրին մինչեւ այժմ: Ահա թէ ինչու դէպի կառավարութիւնը հաւատի ու վստահութեան նշոյլ չի մնացել. ծաղր ու ծանակի է ենթարկւում ամեն մի պատգամաւորութիւն, որ ուզում է դիմել փոխարքային:

Թիֆլիսում այժմ բոլոր փողոցները ինքնապաշտպանութեան (եւ յատկապէս Դաշնակցական) խմբերի հսկողութեան տակ են: Թաղերը խորհուրդ են կազմում, դրամ հաւաքում, տալիս որոշ թւով Դաշնակցական զինուոր խնդրում իրանց ծախսով որպէս գիշերային պահակ: Սա արդէն ազատութիւն չէ, այլ կատարեալ անարխիա: Գիշերները քաղաքում մի հատ ոստիկան չի երեւում: Բազմաթիւ են խուլիգանները, որոնք աշխատում են կրակ տալ հայերի տները: Քանիները բռնուեցին նաւթով լի ամանը ձեռներին. մինչեւ այժմ նրանց չը յաջողուեց իրենց ոճրագործ ծրագիրը գլուխ բերել, տեսնենք մինչեւ ե՞րբ: Զարմանալի չի լինի, եթէ մի օր լսէք, թէ Թիֆլիսը վառւում է. Ամեն օր հրդեհի փորձեր: Երէկ մի խուլիգան բռնեցին սպայի զգեստով. ռուս բանակին արժանի սպան չ'ամաչեց գալ իր մունդիրն ուզելու, երբ իմացաւ խուլիգանի բռնուիլը: «Ես երկու ժամով էի տուել նրան» ասում էր նա. իսկ խուլիգանը բռնուեց նաւթը ձեռքին: Զարդից չէին վախենում, բայց հրդեհից դողում են ամենքը:

Ահա երեք օր է, որ Բաթումից սարսափելի լուրեր են գալիս. կօզակները սպանում են ու թալանում անպատիժ. Հրատարակուած է պաշարման դրութիւն, եւ ամբողջ իշխանութիւնը յանձնուած է մի քանի հարիւր կօզակների կամայականութեան: Պատգամաւորութիւն եկաւ Գաշկովի մօտ խնդրելու, որ դուրս տանեն կօզակներին. այստեղից այդ մասին հրաման գնաց, բայց կոմենդանտը ո՛չ միայն չը կատարեց, այլ եւ շտապեց հրատարակել պաշարման դրութիւն: Եկողների պատմածները անհաւատալի են: Մի քանի հազար զէնքեր են խլել բնակիչներից, տները խուզարկում են ու թալանում: Մի ահռելի միտինգի ժամանակ զօրքը վրայ է հասել եւ կոտորել. ի միջի այլոց սպանուած են երեք [illegible]:

Թիֆլիսի Դաշնակցական խմբերը շատ զոհ չ'ունեցան. հազիւ մի քանի սպանուած, եւ մօտ 10—20 վիրաւոր: Բայց այդ զոհերի մէջ էր եւ մի ընտիր տղայ, խնուսցի Մուշեղը. 20—25 տարեկան երիտասարդ, համեստ, թիկնաւէտ մի տղամարդ, սարից պոկած մի հսկայ: Եւ բոլորս լացինք այդ մահը, մի հերոսական մահ, որ Խարփուղի թաղում տեղի ունեցաւ, երբ կտրիճ երիտասարդը իր խմբով ներս խուժեց թուրքերի դիրքը, կոտորեց եւ կրակ տուեց: Աւաղ որ անխոհեմաբար ուշ էր յետ քաշուել: Թաղումը յուզիչ էր: Որքա՜ն մայրեր էին լալիս այդ „Ղ ա ր ի բ Ա խ պ ո ր ը", ինչպէս անւանում էին նրան իրանց գովքի մէջ Հաւլաբարի կանայք: Ուրիշ „ղարիբ" ընկերներ էլ կան այստեղ, բոլորն էլ պատիւ են բերում Թիւրքա-Հայաստանին: Ընտիր ու կատաղի մարտիկներ են, առնարիւն, հպարտ ու քաջ տղամարդիկ: Վստահութեան եւ հաւատի մի շունչ է փչում մարդու վրայ դրանց հետ խօսելիս. մռայլ են, լուրջ, ճակատները կնճռոտ, բայց որքա՜ն ոյժ, որքան եռանդ... Եւ այլ ու այլ տեսակ հրաշալի մեր ոյժերը, ցաւ է տեսնել, վատնւում են մի ամուլ, ամօթալի պայքարի վրայ շնորհիւ մի բարբարոս կառավարութեան, որ կորցրել է ամօթի վերջին նշոյլը...

# ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

## ՄՕՍԿՎԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՐԷԱԿՑԻԱ

*(Թղթակցութիւն)*

—

ՄՕՍԿՎԱ, յունուարի 10

Հեռագիրները ձեզ հասած եւ ծանօթացրած կը լինին, անշուշտ, անցած դեկտեմբեր ամսի անմոռանալի դէպքերի հետ, բայց այդ հակիրճ տեղեկութիւնները լիակատար լինելուց շատ հեռու են. դժբախտաբար այն բոլոր բուն ժողովրդասիրական հրատարակութիւնները, որոնք միայն կարող էին ճիշտ լուսաբանութիւն տալ ներկայ դրութեանը—դատապարտուած են լռութեան: Մնացած թերթերը բացատրում են անցքերը կամ սեւ հարիւրեակի, կամ ամենաշատը՝ լիբերալ-բուրժուական տեսակէտից: Այստեղի լիբերալ շրջանները սիրում են ամեն մի անյաջողութիւն „ազատագրական շարժման" մէջ վերագրել յեղափոխականներին, իսկ իրենց համարել ամեն մի քաղաքական յաղթութեան եւ բարիքի հեղինակ: Բայց թողնենք դրանց, եւ աշխատենք ըստ կարելոյն գնահատել անցած դէպքերը:

Ամենից առաջ մեզ ասում են, որ ապստամբութիւնը անյաջող էր. նա ճնշուեց եւ առաջ բերեց ներկայ դաժան րէակցիան: Ճշմարի՞տ է արդեօք այս առարկութիւնը:

Մոսկւայի վերջին դէպքերի վերաբերմամբ կարելի է վիճել տակտիկայի, ընտրած մօմենտի տեսակէտից, ոյժերի փոխադարձ յարաբերութեան տեսակէտից, բայց ընդհանրապէս յեղափոխութիւնը դատապարտելու համար հարկաւոր է մի ուրիշ, հակադիր թէօրիա մշակել եւ վէճը դարձնել սկզբունքային: Մոսկւայի ապստամբութիւնը նպատակին չը հասաւ, ճիշտ է, բայց չի կարելի հերքել նրա օգտակարութիւնը: Նա անյաջող էր, որովհետեւ չը հասցրեց իր նպատակին, բայց նա օգտակար էր, որովհետեւ ժողովուրդը, աշխատաւոր դասերը դուրս եկան իրենց բռնաբարուած իրաւունքները պաշտպանելու. ընդհարուեցին „կառավարութիւն" կոչուած բռնակալ ոյժի հետ, թէեւ ինչ-ինչ անբարեյաջող հանգամանքներ թոյլ չը տուին նրանց հասնել արդար նպատակին: Անյաջող կը լինէր շարժումը այն տեսակէտից, եթէ բանւորութիւնը չը լսէր իր առաջնորդների ձայնը, տատանուէր, կամ առաջ բերէր ներքին պառակտում: Այդպիսի դէպքեր տեղի չունեցան—ա՛յնքան

համբերաշխ և ոգևորւած էր բանւորական մասսան... Խուլիգանական հակա-յեղափոխութիւն տեղի չունեցաւ, թէև ժողովուրդը տանջանքների գագաթնակէտին էր հասել, և ինչպէս յայտնի է, այդպիսի պայմանները միշտ հակա-յեղափոխութեան նպաստաւոր հող են ստեղծում, երբ ժողովուրդը հիասթափւում, յոգնում է, իսկ կառավարութիւնը շահագործում է այդ տրամադրութիւնը:

Միւս կողմից քննենք հէնց բուն դէպքերը. ի՞նչ են ցոյց տալիս նրանք: Ամբողջ մի շաբաթ քաղաքի մեծ մասը յեղափոխականների ձեռքին էր. ահաբեկւած ոստիկանութիւնը անհետացել էր, ապաստանել քաղաքի մի քանի ոստիկանատներում և ստիպւած էր պաշտպանողական դիրք բռնել յարձակւող յեղափոխական զինւորախմբերի դէմ: Զինւորականները այնքան ահաբեկւած էին, որ ծպտեալ էին ման գալիս և խմբերով:

Թէ կառավարութիւնը ինչ աստիճան վստահ չէր իր ոյժերի վրայ, որքան շփոթւած և որքան զարհուրած „կարմիր հրէշից", դա երևում էր այն տարօրինակ եղանակից, որով նա կռւում էր ըմբոստների դէմ: Զինւորները և ժանդարմները աջ ու ձախ անմիտ զալպեր էին տալիս բոլորովին անտեղի, թնդանօթներից արձակւում էին բոլորովին „անմեղ" ժողովրդի վրայ, որ ոչ մի առնչութիւն չունէր ապստամբների հետ, ամենամարդաշատ փողոցներում թնդանօթներից „կարտեչ" էին արձակում և մայթերը երեխաների և կանանց դիակներով ծածկում. Դօն-Քիշոտի հիւանդ երևակայութիւնը փոխ առած՝ Մոսկւայի „ցամաքային ծովապետ" Դուբասովը հրամայում էր ռմբակոծել հոյակապ տներ, ուր ոչ մի ապստամբ չը կար, բայց „կարող էր լինել"...

Ապստամբութեան վերջին օրերին, Պրեսնեա կոչւած քաղաքամասում, միապետական կառավարութեան անկման ամենաբնորոշ փաստեր տեղի ունեցան: Նա խըփում էր աջ ու ձախ. թէև մի քանի գործարաններում և տներում էին կենտրոնացած յեղափոխական զինւորախմբերը, բայց ռմբակոծութեան արժանացաւ ամբողջ քաղաքամասը: Ռմբակոծութիւնից զարհուրած Պրեսնեայի խաղաղ բնակիչները դուրս էին թափւում փողոցները, ուր նրանց անխնայ կոտորում էին Դուբասովի զօրքերը: Եւ եթէ նկարագրելու լինենք այդ տեսարանները, շատ երկար կը տևէր: Մենք միայն ուզում ենք ցոյց տալ, որ այս կոտորածները հոգեբանօրէն բղխում էին „կառավարութեան" տրամադրութիւնից, երբ ամենափոքրիկ հարւածը նրան ենթադրել էր տալիս ահագին դիմադրող ոյժ, երբ ամեն մի անցնող-գնացող, եթէ նա զինւորական համազգեստ չունէր, համարւում էր յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն և տ ե ր ր օ ր ի ս տ, և նա հարւածում էր, կոտորում էր հարիւրներով անմեղներ, յուսալով և ենթադրելով որ դրանց մէջ կը լինեն գէթ մի քանի յեղափոխականներ...

Կառավարութեան դրութիւնը փափուկ էր և յաղթութեան յոյսերը պրօբլեմատիք նաև շնորհիւ մի այլ պատճառի—նա ունէր „կասկածւած", և ոչ միայն կասկածւած, այլ և ուղղակի „անյուսալի" զօրամասեր: Յայտնի է, որ այստեղի դէպքերից մի քանի օր առաջ, Մոսկւայի զօրքերի մէջ սկսւեց սովորական զինւորական շարժում, Ռոստովսկի և մի ուրիշ վաշտ ըմբոստացան, հեռացրին սպաներին և սկսեցին ժողովներ կազմել յեղափոխականների հետ. ըմբոստացաւ նաև գընդաձիգ վաշտը, բայց կառավարութեան անթիւ ջանքերը մի կողմից՝ և, ինչպէս պատմում են, ղեկավարների և զինւորների մէջ տեղի ունեցած մի քանի թիւրիմացութիւնները միւս կողմից՝ պառակտում առաջ բերեցին ըմբոստների շարքերում և միապետութիւնը կրկին տէր դարձաւ զինւորական դրութեան: Ինչպէս պատմում են, ապստամբութեան օրերում այդ ը մ բ ո ս տ ն ե ր ի ն զինաթափ էին արել և փակել. յամենայն դէպս, նրանց դուրս չը բերեցին ժողովրդի դէմ կռւելու. Թէ ոստիկանութիւնը և թէ կռւող դրագուններն ու ժանդարմները կռւի օրերին, ինչպէս պնդում են նրանց մերձաւորները, արժանացել էին չը տեսնւած, չը լսւած հ ա յ ր ա կ ա ն խնամքի: Չընայած գործադուլին՝ „մարտնչողները" կերակրւում էին արտակարգ ճոխութեամբ, ստանում էին նաև փող: Փողոց էին դուրս բերում բոլորին հարբած և տալիս էին կատարեալ լիազօրութիւն գործելու և „հայրենիքի թշնամիներին" պատժելու, ինչպէս կը բարեհաճեն... վերջինների կատարած բարբարոսութիւնները նկարագրելու ոչ մի հնարաւորութիւն չը կայ: Նրանց արարքները պատկերացնելու համար՝ որքան կարող էք, ազատութիւն տւէք ձեր երևակայութեանը: Փոքրիկ երեխաներին սրերով և սւիններով խողխողելը միջակ չարագործութիւն էր համարւում: „Կարմիր խաչի" խմբակները գնդակահարելը՝ պարտականութիւն էր: Այդպէս էր հրամայել Դուբասովը, որը չէր ցանկանում ճանաչել „Կարմիր խաչի" կազմակերպութիւնը իբրև չէզոք մարմին (իր յայտարարութիւններից մէկում): Մենք եղանք երկու մեծ հիւանդանոցներում և մեզ սարսափ պատճառեց վիրաւորւած երեխաների ճնշող մեծամասնութիւնը...

Այս բոլոր բարբարոսութիւնների թագն ու պսակն եղաւ մի արտակարգ վայրենի արարք—կառավարութեան արբանեակը յանդգնեց հարւածել գիտութիւնը: Դա պրօֆէսօր Վօրօբեօվի աներևակայելի սպանութիւնն էր: Դէպքը այնքան այլանդակ էր, որ մինչև անգամ Դուբասովի կառավարութիւնը իրեն անյարմար դրութեան մէջ զգաց և այժմ, հարազատ որդուն դատաստանից ազատելու համար, ձգնում է ա ն օ ր մ ա լ յայտարարել նրան. հերոսների շրջանից ստիպւած է գլորել հոգեկան հիւանդների շրջանը... Եթէ սրա վրայ աւելացնենք այն մեծ տպաւորութիւնը, որ թողել են ապստամբները զօրքերի և ոստիկանների վրայ՝ իրենց քաջարի յարձակումներով և հերոսական դիմադրութեամբ, եթէ աւելացնենք այն զգալի կորուստները, որ ունեցաւ Դուբասովը այս կռւում (պաշտօնական յայտարարութիւնը չափազանց նւազեցրել է թւերը), այն ժամանակ կարելի է փոքր ի շատէ ճիշտ գնահատութիւն տալ յեղափոխական կռւին: Չմոռանանք նաև այն հանգամանքը, որ կառավարութիւնը չէր, որ գրաւեց յեղափոխականների դիրքերի մեծ մասը. իրենք ապստամբները քանդեցին իրենց բարրիկադները ժողովրդի օգնութեամբ:

Սակայն ինչպէս վերևում յիշեցինք, մի խոշոր առարկութիւն էլ կայ յեղափոխականների դէմ: Ասում են, որ այս անաջող ապստամբութիւնը պատճառ եղաւ ներկայ ռեակցիային, հետևաբար կառավարութեան յաղ-

թութիւնը մեծ է, եթէ նա այդպէս վճռական կերպով փոխեց իր քաղաքականութիւնը:

Այս առարկութիւնը չի կարող դիմանալ լուրջ քննադատութեան: Ինչպէս, եթէ մենք ուշադիր լինենք ռէակցիայի ծագումը, կը գտնենք նրան վերջին գործադուլից շատ առաջ: Կառավարութիւնը հոկտեմբերի հսկայական գործադուլից, ինչպէս և պօգրօմներից ու Լեհաստանի պատերազմական դրութեան առթիւ տեղի ունեցած փոքրիկ գործադուլից յետոյ համոզուեց, որ նա չափազանցրել էր դիմադրական շարժման ոյժը, որ ընդհանուր գործադուլը այնքան էլ սարսափելի բան չէ, ինչպէս կարծում էր առաջ: Եւ եթէ նա անմիջապէս չը սկսեց իր յետադիմական ընթացքը և ճնշումները—պատճառը՝ մի կողմից զինուորական ահարկու ըմբոստութիւններն էին, որոնց պէտք է վերջ տրուէր, միւս կողմից էլ,—և սա շատ կարեւոր է,—կառավարութիւնը ձգտում էր լաւ ծանօթանալ յեղափոխականների ոյժերի, նրանց կազմակերպութիւնների, կուսակցութիւնների փոխադարձ յարաբերութիւնների հետ, ուսումնասիրել նրանց տակտիկը, թոյլ կողմերը, մի հանգամանք, որ ապագայ ընդհարման համար շատ կարեւոր էր:

Ահա թէ ինչով մասամբ կարելի է բացատրել այն լայն ազատութիւնը, որ վայելեցին ձախակողմեան կուսակցութիւնները և նրանց օրգանները համարեա ամբողջ մի ամիս: Այս բոլոր պատրաստութիւնները տեսնելուց յետոյ ռէակցիան արդէն գլուխը բարձրացրեց: Առիթը գտնել դժուար չէր—Հրատարակեցին միութիւնների վերաբերեալ կանոնները և փոստ-հեռագրական Միութեան անդամները հրաւիրեցան լուծել այդ „ապօրինի" միութիւնը: Բուրժուական անհեռատես թերթերը կառավարութեան յամառութիւնը վերագրում էին որեւիցէ մինիստր Դուրնովօի ինքնասիրութեան, այնինչ այդ դէպքը մի ամբողջ շրջանի սկիզբն էր կազմում և ունէր քաղաքական կարեւոր նշանակութիւն: Սկսեցին մի շարք քննութիւններ, բանտարկութիւններ (օրինակ, գիւղացիական միութեան հիմնադիրների և այլն): Նշմարուեց արհամարհական վերաբերմունք դէպի լիբերալները (զեմստվօական և քաղաքային գործիչների, ներկայացուցիչների ընդունելութիւնը Վիտտէի մօտ և երկար ժամանակ անպատասխան թողնելը) և այլ սրա նման ռէակցիայի սիմպտոմներ: Հարկաւոր էր գրգռել բանուորութիւնը, մի կերպ նրան փողոց դուրս բերել, բաժանել յեղափոխականներին լիբերալներից, որոնք, թէև շատ տարբեր եղանակներով, բայց միահամուռ յարձակումներ էին գործում կառավարութեան վրայ: Կոնֆլիկտը անխուսափելի էր: Պետերբուրգի բանուորները մի քանի անգամ գրեցին, թէ նրանք դուրս կը գան կռւի դաշտ այն ժամանակ, երբ դա ձեռնտու կը լինի իրենց, և ոչ թէ Դուրնովօին: Ընդհարումը արդէն սկսուել էր, միայն պաշտօնապէս չէր յայտարարուած:

Կառավարութիւնը չէր կարող երկար սպասել, հարկաւոր էր ռէակցիային „օրինաւոր" ընթացք տալ, որը արդէն ժամանակի հարց էր դարձել: Բանուորութեանը մենամարտութեան կանչելու համար հարկաւոր էր վիրաւորել նրան: Վիտտէն վճռողական քայլ արեց—բանտարկեց բանուորական պատգամաւորների խորհուրդը, իր ամբողջ կազմով: Եւ անկարելի եղաւ յետաձգել ընդհանուր գործադուլը, որին միացաւ Մոսկուայի ապստամբութիւնը... Ռէակցիան իր ընթացքը շարունակեց առանց որևէ օրգանական կապի ապստամբութեան հետ: Նա միայն ընդունեց արտաքին փայլ: Կառավարութիւնը ցոյց էր տալիս, որ իբր թէ նուաճում է ապստամբներին, այն ինչ նա զբաղուած էր բոլորովին այլ գործերով: Ապստամբութիւնը Մոսկուայումն էր, իսկ Տուլայում, Տօմսկում, Սարատովում, Կիշնևում պէտք էր ընտրութիւնների վրայ ազդել ամենացինիկ կերպով: Հարկաւոր էր բանտերը լցնել ամենահամեստ լիբերալներով, և խանգարել յեղափոխութիւնը դատափետող Սահմանադիր-Դեմոկրատականների ժողովները:

Ոչ, ապստամբութիւնը չէր ռէակցիայի պատճառը: Անկախ դրանից, ռէակցիան նպատակ դրեց գրաւել կառավարութեան շուրջը պահպանողական տարրերը, և այդ նպատակով արդէն ամենաեռանդուն ագիտացիա, ամեն միջոց գործ է դրւում պառակտել դիմադրական ոյժերը, քայքայել նրանց կազմակերպութիւնը: Եւ այժմ սկսուած է մի կռիւ կառավարութեան և օպպօզիցիայի մէջ, չարաբաստիկ դումայի շուրջը: Բայց դրա մասին յաջորդ անգամ:

Շ.

## ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Եւրոպայի հայասէրների դիմումը Միացեալ-Նահանգների նախագահ Ռօզվելտին արձագանք գտաւ հայկական գաղութների մէջ: Փետրվարի 17-ին Ժընեվում տեղի ունեցաւ հայկական ժողով, մասնակցութեամբ ուսանողութեան և հայ գաղութի, և որոշումը արդէն հեռագրով հաղորդուեց Ռօզվելտին: Այդ որոշման մէջ յոյս է յայտնուած, որ Անդրատլանտեան Մեծ հանրապետութեան ներկայացուցիչը իր բոլոր ջանքերը գործ կը դնի Թիւրքահայկական խնդիրը, սրբագործուած միջազգային դաշնագրերով, ներկայացնելու Լահէյի վեհաժողովին: Նոյն մաքով հեռագիրներ են ուղարկուած արդէն բուլղարական կարեւոր հայ գաղութներից՝ Սօֆիայից, Ռուսչուկից և Վառնայից, որտեղ այդ նպատակով կազմակերպուեցին յատուկ և բազմամարդ միտինգներ: Նոյնպիսի դիմումն անելու պատրաստութիւններ են տեսնւում Եգիպտոս և Ամերիկա: Եւրոպական ուրիշ հայ գաղութները՝ հիմք ունինք կարծելու, յետ չը պիտի մնան և պիտի միացնեն իրենց ձայնը ընդհանուր կոչին:

*

Հրաւիրում ենք հայ հասարակութեան ուշադրութիւնը Լոնդօնում սկսուած անգլիերէն „Pro Armenia"-ի վրայ, որ նոյն նպատակն ունի, ինչ որ Պարիզի "Pro Armenia"-ն:

*

Մեր յեղափոխական մամուլը հարստացաւ մի նոր և կարեւոր հրատարակութեամբ,—„Յառաջ" լրագիրը, որ սկսեց լոյս տեսնել յունուար ամսից Թիֆլիսում և նուիրուած պիտի լինի Դաշնակցական գաղափարների տարածման:

*

Փետրուար 27-ին Թիֆլիսից ստացանք հետևեալ հեռագիրը. „Կառավարութիւնը սիստեմատիկաբար զինաթափ է անում հայերին, կատարելապէս հանգիստ թողնելով թուրքերին":

*

Այս օրերս Դաշնակցութեան Ժընեվի տպարանից լոյս տեսաւ մի նոր բրօշիւր, „Մեծ մարդասպանի դէմ" վերնագրով, որ Աբդիւլ-Համիդի դէմ եղած մահափորձի դատավարութեան պաշտօնական արձանագրութիւնն է: „Դրօշակի" խմբագրութեան կողմից բրօշիւրին կցած յառաջաբանի մէջ, ի միջի այլոց, ասուած է.

„Այդ գաւեշտական հայհոյանքներին, ուղղած Յեղափոխ-

